

Գուցէ մի քանիսներ կը միա-
նան հայ լուսաւորչական եկեղե-
ցու հետ, բայց այլադաւանների
մեծ մասը դարձեալ հաւատարիս
կը մնան իրանց կրօնին, և ու-
րեմն աւելի էլ թշնամաբար կը
նայեն մեծամասնութեան վրա:

Ամենքին դարձնել ազգային
եկեղեցուն անհնարին է, իսկ
յայտնելով որ միայն Հայ-լուսա-
ւորչականն է բուն Հայը, դորա-
նով յետ կը մղվեն Հայութենից
կաթօլիկոսերը և բողոքականները,
իսկ այնուհետև կատարելապէս
անհնարին կը լինի թիւրքաց Հա-
յերին ապացուցանել իրանց Հայ-
մահմետական կամ Հայ-յունադա-
ւան եղբայրներին թէ նրանք եւ
ցեղով և ազգութեամբ Հայ են:

Եյդպիսով քաղաքական ան-
հասունութեան պատճառով հա-
յերը իրանք իրանց ձեռքով ի-
րանց տունը քանդում են:

Արօնական երկպառակութիւն-
ները ամենալաւ միջոց են ազգու-
թեան խնդիրը սպանելու համար:
Դուցէ թիւրքաց տէրութիւնը
տեսնելով որ հայոց ազգային խրն-
դիրը հսկայական քայլերով առաջ
է գնում, աննկատելի կերպով
ինքն է դրդել հայերի մէջ կրօ-
նական վէճերը....

9. u.

ԱԵՐՔԻՆ ՏԵՍԱԿԹԵՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

ՅԵՒԳԱԾ, 27 ԳԵՐԱՎԱՐԻ

1876 թւին մի քանի հայ ուսանողներից կազմվեց մի ընկերութիւն, որի նպատակը պիտի լի-էր հաւաքել ստորագրութեան միջոցով նույ-ատւութիւններ և սորանով օգնել չքաւոր հայ ուսանողներին։ Ընկերութեան ինիցիատորն էր այժմ հանգուցեալ) Յովսէփ Տէր Յարութիւ-եանցը։ Մրա ազգասիրական եռանդը, քաղցր նաւորութիւնը գրաւել էին բոլոր իր ընկերնե-ի սիրութ։ Երբ սա առաջարկեց մեզ հիմնել մի շրջպիսի ընկերութիւն, մենք նրա ընկերները սկսյն ընդունեցինք այդ առաջարկութիւնը մեծ աւականութեամբ։ Գործը շատ լաւ առաջ էր նում։ Բաւականին փող էր հաւաքվել, երբ զըժ-աղդաբար մահը խեց Յովսէփին մեղանից։ Ենք էլ զանազան հանգամանքներից ստի-ված անշատվեցինք միմեանցից։ Ընկերութիւ-ը կամաց կամաց թուլացաւ և այս մի տարի, որ բոլորովին ընկած է։ Այդ ընկերութիւնից նաց մի որոշ գումար։ Հրապարակօրէն խնդ-ում ենք ընկերութեան գանձապահից (որ ան-ուշտ այս նամակը կը կարդայ) լրագրի միջո-աւ յայտնել ի գիտութիւն նուիրատուների, է ինչքան փող իր մօտ կայ և ինչքան գտնա-ան անձանց մօտ։ Հիմնող անդամներից մեա-ած ենք թիֆլիսում երկու հոգի, ուր և կազմ-եց ընկերութիւնը։ Որովհետև այդ ընկերու-թիւնը մենք Ենք կարող յարունակել զանա-

ան մեզանից անկախ պատճառներով, ուստի
ենք մեզ իրաւունք ենք համարում ցանկանալ
ո այդ փողը նուիրիվ «Արարատիան ընկերու-
թեանը», մասնաւոնդ համոզված լինելով, որ մեր
ըստ ցանկութիւնը հակառակ չէ կարող լինել
ուիրատուների կամքին:

Սիմեոն Գուլամիրեանց

Վաղիկավկազ,

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

ՎԱՐԴԻԿԱՎՈՒԹՅԱՆ, 13 Մարտի
Զեր պատուական լրագրի մէջ № 35 երկու
ստողերով գրած նամակի անստուգութիւնը գույց

— Դա ծառի ճիւղն է։ Խսկ Թիֆլիսում, ժողովրդի բարձր գասակարգի մէջ, արդէն սկսվում է կնոջ բարոյական չքաւորութիւնը։ Ապականութիւնը տիրում է այնտեղ, և կինը գտանվում է իր զօսացած դրութեան մէջ։ — Դա ծառի կատարն է։

Նկատելի է և մի ուրիշ երևոյթ։ Կինը, սկսեալ ժողովրդի ստոր դասակարգից, որքան աստիճանաբար բարձրանում է, որքան նա ծանօթառակից քոյրերի վրա, —նա ինքը դաւնում է վատ օրինակ, նա ինքը տարածում է շոայլութիւն և բարերի ապահանութիւն։

նում է աշխարհի հետ և որքան նա մօտենում է գիտութեան լոյսին, այնքան աւելի անպիտանառում է, և այնքան աւելի սեփականացնում է իրան այնպիսի յատկութիւններ, որ բարոյական չեն, թողեալ այդ, կինը ժողովրդի ստոր և միջն դասերի մէջ պահպանել է իր ցեղական առանձնութիւնները, հաւատարիմ է մնացել իր ազգային անհատականութեամբ, խօսում է մայրենի լեզուով, յարգում է վաղեմի տւանդութիւնները, աւելի մօտ է եկեղեցուն, և չէ հեռացել այն սովորութիւններից, որով ապրել են նրա մայրերը: Որի ընդհակառակին, կինը բարձր դասի մէջ (բացի գաւառներից) արդէն սկսել է օտարանալ, չէ խօսում մայրենի լեզուով, հեռանում է եկեղեցուց, և զգուանքով է նայում ազգային աւանդութիւնների վրա: Այսպիսի տխուր երևոյթները տեսնելուց յետոյ Բնչ ասենք. արդեօք կրթութիւնը վնասական էր, թէ կինը իր մէջ հիմք, ամրութիւն չունէր, և կրթութեան լոյսը ու ջերմութիւնը նրան մօտեցրածին պէս, նա լուծվեցաւ, իր բաղադրութիւնը փոխեց: Աչ այն և ոչ այս կասեմ ես. պատճառները պէտք է ուրիշ բանի մէջ որոնելո...

Դրութիւնը բոլորովին յուսահատական չէ: Կանացի ամբոխը պահպանել է իր անարատութիւնը. իր կատարեալ մաքրութեան մէջ. — դա, թէկ անմշակ, բայց չափազանց արգաւանդ հող է, որ հմուտ երկրագործի ձեռքում կարող է հրաշալի պտուղներ ընծայել: Փոյթ չէ, եթէ ամրոխի մակերևոյթից բարձրացած առանձին մասները ցոյց են տալիս մի քանի փուլթեան նշաններ, — դրանք, կամ ժամանակով կը փոխվեն դէպի լաւը, և կամ կտրվելով, կը հե-

տալու համար, խնդրում եմ տպել իմ երեք տարգայ երեցփոխանութեանս հաշիւը: 1876-ին յունվարի 1-ին ստացայ նին երեցփոխանից փոք 902 րուբլ 41 կոպէկ. յլ թացս 1876 ամի եղեկէ մուտք 1859 ր. 93 կ., 1877մ-ուաք 1573 ր 25 կ., 1878-մուտք 1805 ր. 65 կ., ընդամենը 6141 ր. 24 կ.: Յընթացս 1876 ամի եղեկէ ծախք 1098 ր. 63 կ., 1877,-1075 ր. 41 կ. 1878,-1167 ր. 17 կ., ընդամենը 3341 ր. 21 կ. Հանելով ծախսը մուտքից մնում է 2800 ր. 3 կ.

Ստայդ է նամակագրի գրածը որ փետրվարը 19 ժողովեցան տեղիս հայ հասարակաւթեամ անդամները ծխական դպրոցումը հաշիւս տնս նելու, հաշիւս ներկայացնելուց յետոյ խնդրեցի որ նոր երեցփոխան ընտրեն, իսկ հասարակութիւնը չնորհակալութիւն անելով ինձ իմ անցեալ երեք տարգայ ծառայութեանս համար դարձեալ խնդրեց որ ես շարունակեմ էլի երեք տարի, բայց հանդամանքներիցս ստիպված խընդրեցի հասարակութիւնից ինձ ազատ կացուցանելու այդ պաշտօնից, վասնորոյ հասարակութիւնն էլ ընտրեց նոր երեցփոխան: Ուրեմն զարմանում եմ նամակագրի անհիմն տեղեկութիւնների և անխիղճ դատողութիւնների մասին որ չունենալով հաստատ աղքիւր, իր թոյլ գրչով հանդէս է գուրս գալիս. խնդրեմ նամակագրը անունը և ազգանունը յայտնել լրագրիդ միջոցաւ նրա հետ ուղիղ հաշիւ տեսնելու:

Երեց Գոլիս Յակով Բաղդասար հանց
ՆԱՄԱԿ ԽՄԱԿԳՐԻՆ
Թիֆլիս, 9 մարտի
«Նուել է ը քեասի բ գեղը ցին երին» անուն
ուով զրքոյից ուղարկելով սրա հետ 110 օրինակ
խնդրեմ 75 հատ նրանցից հասցնել իմ կողմից
ինչպէս նուել «Արարատեան ընկերութեան» 1
35 օրինակ լինել բարի վերցնել ձեզ հետ առաջ
լիկայ ճանապարհորդութեան ժամանակ դէպի
հայաբնակ գաւառները բաժանելու զանազան
ուսումնաբաններին ըստ ձեր բարեհայեցողութեան։ Ընդունեցէք և այլն,

9. S.—UkLp

ՆԱՄԱԿ ԽՄԲՈԳՔԻՆ

—

Յի Պլիս, 9 մարտի
«Նուելը քետափի բ գեղը ցիներին» անունու
նույն զբոյկից ուղարկելով սրա հետ 110 օրինակը
խնդրեմ 75 հատ նրանցից հասցնել իմ կողմից
ինչպէս նուելը «Արարատնան ընկերութեան» 1
35 օրինակ լինել բարի վերցնել ձեզ հետ առաջ
ջիկայ ճանապարհորդութեան ժամանակ դէպէ¹
հայաբնակ գաւառները բաժանելու զանազան
ուսումնարաններին ըստ ձեր բարեհայեցողութեան։ Ընդունեցէք և այն,

ՆԵՐՔԻՆ ՀՈՒԹԵՐ

Նորերում ՔՈՒԹԱՅԻՍԻՑ ոչ հեռու մի գիւղում մի քրիստոնեայ ութ տարեկան աղջիկը անհետացել էր: Մի քանի ժամանակից յետոյ աղջկան մեռած գտան: Ամբոխի կարծիքը մատնացոյց էր անում հրէաների վրա, հիմնվելով այն աւանդութեան վրա, որ իբր թէ հրէաները սպանում են քրիստոնեայ երեխաներին և նըրանց արիւնը խմում: Մեղադրված հրէաները ներկայացան Քութայիսի նահանգական դատարանի առջև: Դրանց պաշտպաններ Ռուսաստանից եկած ամենանշանաւոր աղվօկատներ էին Մօսկվայի աղվօկատ կուպէքրնիկ և Ս. Պետերբուրգի Ա. Լ. Ք. սանդրօփ որ հրէաները արդարացան: Ընդհանուր ուրախութիւն է Քութայիսում:

—

Ընթերցողը գիտէ որ նորերում կազմվեցաւ Թիֆլիսութ հայոց թատրօնական ընկերութիւն: Այս ընրերութիւնը ընտարեց այժմ մի մասնաժողով վեց անձներից բաղկացած, որոնք են. Գրիգոր Արքունի, Գաբրիէլ Սունդուկեանց, Ալէքսանդր Մանթաշեվ, Խոայ Գիտօելի իշխ. Նապօլէօն Ամատունի և Արքար Յովհաննիսեան: Մասնաժողովի նախագահ ընտարվեց առ իշխ. Ամատունի, իսկ պատուաւոր նախագահ իշխ. Եազօն Թումանով:

Երևանի նմանանգի Գարալագեաղ գաւառի Քե-
շիքեանդ գիւղից պ. բժիշկ Գարբիէլ Յովհան-
նիսեանց զրաւմ է մեզ հետեւեալը: «Այստեղ
բացվել է տղայոց ծխական դպրոց, որի համար
հարկաւոր է մի ուսուցիչ: Աւանդելի առարկա-
ներն են Բարոյախօսութիւն, Հայոց լեզու, Ռու-
սաց լեզու, Վայելչագրութիւն, Իրերազմնութիւն,
Թւաբանութիւն և Երգեցողութիւն: Աշակերտ-
ների թիւը 30 մինչև 40 են, իսկ եթէ աւելի
լինեն, այն ժամանակ ուսուցչին կը նշանակվի
մի օգնական ես: Ուսուցիչը բացի այդ առար-
կաները իմանալուց, պէտք է ծանօթ լինի և
դասաւանդական ձեերին: Ուսուցչի տարեկան
վարձը երեք հարիւր ըսուբլ է, կացարան և վա-
ռելափայտ, Ուրախ կը լինենք, եթէ ուսուցիչը
մի քանի տարով մնալու համար պայման կապի
հասարակութեան հետ: Ցանկացողները կարող
են ուղղակի զիմել հետեւեալ հասցեավ: Ըստ
Օգանսյանու:

Մեր զարգացած կանայք կարող են ունենալ միայն զրականական սալօններ, բայց մեր զրականութեամբ պարապվող երիտասարդութիւնը դեռ ևս այն աստիճան անկիրթ է, որ հազիւթէ իր պատիւը հասկացող մի տիկին կը ցանկանար նրանց առջև բաց անել իր դրները։ Կնոջ սալօնի ազդեցութիւնը գործող երիտասարդութեան վրա հազարաւոր օրինակներով ապացուցված է լուսաւոր ազգերի մէջ։ Այնտեղ ոչ միայն ոգեսորվում է բանաստեղծը, ոչ միայն կրթվում է վիպասանի ճաշակը, և ոչ միայն պարզվում են պուբլիցիստի հայացքները, — այլ այնտեղից ոգի են առնում երևելի քաղաքական մարդիկը։ Սեղանում գրողները ապրում են առանձնացած խումբերով և տեսնվում են աւելի կափէներում։ Նթէ որ և իցէ կին ընդունէր այս և այն խումբը, դուրս կը գար Խիստ նեղ շըրջան, և այն դէպքում նրա սալօնը կը ծառայէր որպէս գործիք մի կուսակցութեան, որը մեր մէջ կազմվում է ոչ թէ գաղափարի անունով, այլ

շահասպիրական ինտերեսներով:

Կինը իր նուրբ խելքով և հրապուրիչ բնաւ-
որութեամբ կարող էր լինել մի լաւ կապ գոր-
ծող ուժերի մէջ՝ նրա սալօնում կարող էին
մշակվել և հասունանալ ամեն տեսակ հասա-
րակական խնդիրներ։ Եւ կինը կարող էր առաջ-
նորդել և խրախոյս տալ գործող անձնիքներին։
Եւ գրանումն է բովանդակվում կնոջ բարձր
նշանակութիւնը, երբ նա կը մասնակցէր հասա-
րակական կեանքին, իր ձեռքում որպէս գործիք
վարելով տղամարդին։ Եւ ոչ միայն ժողովրդի
բարձր դասի մէջ, այլ իշնելով դէպի ցած, նրա
բոլոր ծալքերում, կինը կարող էր յայտնվել
որպէս ազգող ողի, որպէս ներգործող ուժ, թէ
խոշոր և թէ մանր բաների, մէջ։ —Ահա դրա-
նումն է նրա մեծ հասարակական կոչումը։

It's a wrap!

